



**ԱՐՄԵՆԻԱ
ԻՆՇՈՒՐԱՆՍ**

**«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

**«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍԴԸ խորհրդի
«07» փետրվարի 2025թ. թիվ 17 որոշմամբ**

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ
(ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ
ՎՆԱՍՆԵՐԻՑ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ք. Երևան

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ	4
ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ	5
ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐ	9
ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ	11
ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	12
ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ	13
ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄ	14
ԲԱԺԻՆ 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	15
ԲԱԺԻՆ 11. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ/ԾԱՆՈՒՅՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ	17
ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻՑ ՀԵՏՈ	18
ԲԱԺԻՆ 13. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ	21
ԲԱԺԻՆ 14. ՉՀԱՏՈՒՅՎՈՂ ԳՈՒՄԱՐ	25
ԲԱԺԻՆ 15. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)	25
ԲԱԺԻՆ 16. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)	26
ԲԱԺԻՆ 17. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ	26
ԲԱԺԻՆ 18. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ	28

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն «Հրդեհից, բնական աղետներից և (կամ) գույքին հասցված այլ վնասներից կամավոր ապահովագրության կանոնները» (այսուհետ՝ Կանոններ) մշակված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2. Հրդեհից, բնական աղետներից և (կամ) գույքին հասցված այլ վնասներից կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի համապատասխանաբար «Հրդեհից և բնական աղետներից ապահովագրության» և «Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն» դասերի մեջ:

1.3. Կանոնները հանդիսանում են Հրդեհից, բնական աղետներից և (կամ) գույքին հասցված այլ վնասներից կամավոր ապահովագրության պայմանագրի և/կամ վկայագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը: Պայմանագիրը կարող է բովանդակել կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշված այլ պայմաններ, որոնք, սակայն, չպետք է հակասեն Կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին:

1.4. Կանոններով սահմանված պայմանները կարող են փոփոխվել (լրացվել, ուժը կորցրած ճանաչվել) միայն Ապահովագրողի խորհրդի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

1.5. Կանոնները հրապարակային փաստաթուղթ է, և տեղադրված է Ապահովագրողի www.armeniainsurance.am պաշտոնական ինտերնետային կայքում:

1.6. Կանոնների համաձայն Ապահովագրողը, գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն, Ապահովադիրների հետ կնքում է Հրդեհից, բնական աղետներից և (կամ) գույքին հասցված այլ վնասներից կամավոր ապահովագրության Պայմանագիր:

1.7. Կանոնների համաձայն Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրին (Շահառուին) Կանոններով սահմանված կարգով հատուցել Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարն ամբողջությամբ կամ նրա մի մասը՝ կախված պատճառված վնասի չափից և Պայմանագրի պայմաններից:

1.8. Կանոններով Ապահովադիր կարող է հանդիսանալ՝

1.8.1. իրավաբանական անձը,

1.8.2. ֆիզիկական անձը,

1.8.3. պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը,

1.8.4. միջազգային կազմակերպությունը,

1.8.5. դեսպանատունը, հյուպատոսարանը:

1.9. Ապահովադիրն իրավունք ունի Պայմանագիր կնքել ինչպես իր օգտին, այնպես էլ հոգուտ երրորդ անձի (այսուհետ՝ Շահառու), որն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հիմքերով ապահովագրված գույքի նկատմամբ ունի գույքային շահ և

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

համապատասխանաբար հանդիսանում է շահագրգիռ անձ այդ գույքի անվտանգության ապահովման, անվնաս պահպանման խնդրում:

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Կանոններում կիրառվող անվանումներն ու հասկացությունները որոշ դեպքերում հատուկ պարզաբանվում են համապատասխան սահմանումներով: Եթե որևէ անվանման կամ հասկացության նշանակությունը պարզաբանված չէ Կանոններում և չի կարող պարզաբանվել օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով, ապա նման անվանումը կամ հասկացությունը պարզաբանվում է տառացի և բառացի նշանակությամբ:

2.2. Կանոններում գործածվող հիմնական հասկացություններն են՝

2.2.1. **Ապահովագրող՝** «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ,

2.2.2. **Ապահովադիր՝** Ապահովագրողի հետ Պայմանագրի կնքած անձ,

2.2.3. **Ապահովագրական արժեք՝** Պայմանագրի կնքման պահին տվյալ գույքի իրական (շուկայական) արժեքը,

2.2.4. **Ապահովագրական գումար՝** Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ,

2.2.5. **Ապահովագրական սակագին՝** սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ,

2.2.6. **Ապահովագրավճար՝** Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադիր կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար,

2.2.7. **Չհատուցվող գումար՝** Ապահովադիր մասնակցության չափը վնասի հատուցմանը (վնասի վերականգնմանը), որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Պայմանագրով կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար,

2.2.8. **Տարերային աղետ՝** բնության տարերքների արտաքին ազդեցությունները, որոնք տեղի են ունենում երկրի ընդերքում (երկրաշարժ, հրաբխի ժայթքում և այլն), մակերևույթին (սելավ, սողանք, ձնահոսք, ջրհեղեղ, հրդեհ և այլն) և մթնոլորտում (փոթորիկ, բուք, պտտահողմ, կայծակ և այլն):

2.2.9. **Գույքի ամբողջական կորուստ՝** ապահովագրված գույքի կորուստ (հափշտակում կամ այլ կերպ անհետացում), ոչնչացում (վերանորոգման տեխնիկապես անհնարինություն), կամ գույքի վերանորոգման համար անհրաժեշտ ծախսերի գերազանցում ապահովագրական պատահարը վրա հասնելուն նախորդող պահին դրա իրական գնին:

**ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔ**

3.1. Կանոնների համաձայն կնքված Պայմանագրով ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադիր՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող՝ գույքի տիրապետման, շահագործման (օգտագործման) կամ տնօրինման հետ կապված գույքային շահերը, որոնք կապված են գույքի ոչնչացման, կորստի կամ վնասման հետ:

3.2. Կանոններով ապահովագրության ենթակա է՝

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

3.2.1. անշարժ գույքն ամբողջությամբ (շենքեր և շինություններ), ինչպես նաև նրանց առանձին ճարտարապետական և կոնստրուկտորական մասեր և տարրեր (շենքերի մասեր, բնակելի և ոչ բնակելի տարածություններ, առանձին նրանց ներքին հարդարումը),

3.2.2. շարժական գույքը (սարքավորումներ, ուժային և այլ մեքենաներ, փոխանցող հարմարանքներ, գույք, պատրաստի արտադրանք, ապրանքներ, հումք, նյութեր և այլն):

3.3. Պայմանագրով սահմանված լինելու դեպքում ապահովագրությունը տարածվում է նաև հետևյալ գույքի վրա՝

3.3.1. կանխիկ փող,

3.3.2. արժեթղթեր, ակցիզային դրոշմապիտակներ,

3.3.3. թանկարժեք և հազվագյուտ հողերի մետաղներ, թանկարժեք քարեր, մարգարիտ և ոսկերչական իրեր,

3.3.4. նամականիշեր, մետաղադրամներ, հուշադրամներ, մեդալներ, նկարներ, քանդակներ և հավաքածուների կամ այլ առարկաներ, որոնք հանդիսանում են արվեստի ստեղծագործություններ,

3.3.5. բանկային քարտեր,

3.3.6. այլ գույք:

3.4. Համաձայն Կանոնների ապահովագրության ենթակա չէ՝

3.4.1. ջրային ռեսուրսները, բնահողը և ընդերքից չհանված օգտակար հանածոները,

3.4.2. բույսերը, կենդանիները, միկրոօրգանիզմները,

3.4.3. օֆշորային կառույցները (բաց ծովում և մայրցամաքային շելֆի սահմաններում գտնվող գույք, այդ թվում փարոսներ, նավթային հենահարթակներ և այլն),

3.4.4. պայթուցիկ նյութերը և զինամթերքը,

3.4.5. աղբանոցները,

3.4.6. ատոմային վառելիքի վառվելու ցիկլում օգտագործվող սարքավորումները և այլ գույքը,

3.4.7. պետական իրավասու մարմինների կողմից վթարային վիճակում ճանաչված շենքը և շինությունը, ինչպես նաև այդպիսի շենքում (շինությունում) տեղակայված գույքը:

3.5. Կանոնների համաձայն ապահովագրության տարածք է համարվում Պայմանագրում սահմանված տարածքը:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

4.1. Կանոնների համաձայն, Պայմանագրով նախատեսված լինելու դեպքում, ապահովագրական ռիսկ (ապահովագրական պատահար) է համարվում Պայմանագրի գործողության ժամկետում տեղի ունեցած և իրավասու պետական մարմինների կողմից տրված փաստաթղթերով կամ Ապահովագրողի կողմից հաստատված այն վնասները, որոնք հետևանք են՝

4.1.1. **Հրդեհի:** Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում) կրակի ծագման արդյունքում, այդ թվում՝ հարևան տարածքներում և Ապահովադիրին (Շահառուին) չպատկանող տարածքներում առաջացած, որը կարող է ինքնուրույնաբար տարածվել դրա ծագման և տարածման համար հատուկ չնախատեսված վայրերում, ինչպես նաև կարող է ունենալ գույքի վրա ազդեցություն այդ կրակի, վառվող սուբստանցիաների (ծխի և այլն), բարձր ջերմաստիճանի հետևանքով կամ հրդեհը հանգցնելուն ուղղված օրինական

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

գործողությունների, այդ թվում՝ հրդեհաշիջման ավտոմատ համակարգերի օգտագործման հետևանքով:

4.1.2. Պայթյունի: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է կենցաղային կամ արտադրական նպատակներով օգտագործվող գազի կամ պայթուցիկ նյութերի պահպանման, տեղափոխման կամ վերամշակման (օգտագործման) համար օգտագործվող գազատարների, կաթսաների և այլ տարողությունների կամ մեխանիզմների պայթյունի:

4.1.3. Կայծակի հարվածի: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է ապահովագրված գույքի վրա կայծակի անմիջականորեն ջերմային կամ էլեկտրադինամիկ ազդեցության:

4.1.4. Փոթորիկի: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է 17,2 մ/վ կամ 62 կմ/ժ (Բոֆորտի սանդղակով 8 բալ և ավելի ուժգնությամբ) միջինից բարձր արագությամբ քամու մեխանիկական ազդեցության կամ քամու հետևանքով շարժվող (տեղափոխվող) օբյեկտների հետ ուղղակի բախման: Ընդ որում՝ քամու արագությունը պետք է հավաստվի վիճակի նկատմամբ հսկողություն իրականացնող պետական մարմինների կողմից տրված տեղեկանքով:

4.1.5. Կարկուտի: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է սառցե կտորների տեսքով մթնոլորտային տեղումների:

4.1.6. Ջրհեղեղի: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է գետի, լճի, ծովի կամ այլ բնական կամ արհեստական պաշարների ջրի մակարդակի բարձրացման, պատնեշների ճեղքվածքների, սահմանազատող ամբարտակների փլուզման, ցունամիների, ինչպես նաև անձրևների:

4.1.7. Երկրաշարժի: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է ստորգետնյա ցնցումների և տատանումների: Ընդ որում՝ երկրաշարժի հասցրած վնասները Պայմանագրով ծածկվում են, եթե երկրաշարժը գրանցված է ապահովագրության տարածքում իրավասու սեյսմոգրաֆիկ ծառայությունների կողմից և երկրաշարժի ուժգնությունը Ռիխտերի սանդղակով կազմել է 5 (հինգ) բալ և ավելի:

4.1.8. Հրաբխի ժայթքման: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է հրաբխի խառնարանից լավայի, մոխրի, տաք գազերի և լեռնային ապարների կտորների ելքի:

4.1.9. Գետնի նստվածքի: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է գետնի բնական իջեցման (լեռնախոռոչների, ճեղքվածքների):

4.1.10. Սողանքի (փլուզման): Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է բնահողի բնական սահքի, քարերի և հողակույտերի վայր ընկնելու՝ ներառյալ բնական քարաթափի և ցեխաջրի:

4.1.11. Ջյան զանգվածակույտի: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է լեռնալանջից սահելով իջնող ձյան կամ սառույցի շարժվող զանգվածի:

4.1.12. Ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և համանման այլ համակարգերից ջրի արտահոսքի: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է դրա վրա ջրի կամ ապահովագրության տարածքում գտնվող ջրմուղային, կոյուղային, ջեռուցման, սառեցնող, օդափոխող կամ այլ համանման համակարգերից այլ հեղուկների ներգործության (ներառյալ այդ համակարգերի վերանորոգման ժամանակ պատճառված վնասները), կամ Ապահովագրին (Շահառուին) չպատկանող հարևան շինություններից (ներառյալ չբնակեցված տարածքներ) ջրի կամ այլ հեղուկների ներգործության:

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

4.1.13. Ցայտաջրմուղային համակարգերի և ջրաքարշ խողովակների ջրի արտահոսքի: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն առաջացել է ջրատար խողովակներից կամ այլ սարքավորումներից, որոնք հանդիսանում են հրդեհի հանգեցման ցայտաջրմուղային համակարգերի կամ ջրաքարշ խողովակների համակարգի մի մասը, խողովակների պայթման (այդ համակարգերում այլ կոտրվածքների) կամ այդ խողովակների հանկարծակի և առանց անհրաժեշտության միացման հետևանքով ջրի հանկարծակի դուրս գալուց: Ընդ որում, սույն ենթակետի համաձայն ապահովագրվում են միայն այն խողովակները և սարքավորումները, որոնք բացառապես նախատեսված են նշված հակահրդեհային համակարգերի համար, հանդիսանում են այդ համակարգի տարրեր:

4.1.14. Կոտրանքի կամ վնասման միջոցով գողության: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն առաջացել է երրորդ անձանց հետևյալ անօրինական գործողությունների հետևանքով (ներառյալ դրանց փորձի)՝

4.1.14.1. ներխուժում տարածք՝ դռները, պատուհանները կամ դրանց ծածկերը (ճաղավանդակներ, փեղկեր, և այլն) ջարդելու, ստեղներ, կրկնօրինակված բանալիներ կամ այլ տեխնիկական միջոցներ օգտագործելու միջոցով: Կրկնօրինակված են համարվում այն բանալիները, որոնք պատրաստվել են այնպիսի անձանց կողմից կամ հանձնարարությամբ կամ համաձայնությամբ, ովքեր չունեն բանալիների օգտագործման իրավունք: Ընդ որում, գույքի անհետացումը չի ենթադրում կրկնօրինակված բանալիների օգտագործում:

4.1.14.2. առարկաների հափշտակում կողպված այնպիսի տարածքներից, որտեղ հանցագործն ավելի վաղ ներխուժել էր օրինական ճանապարհով, և այնտեղ թաքնվել էր մինչև տարածքի կողպվելը, հողամասերից այնպիսի առարկաների հափշտակում, որոնք կցված չեն անշարժ գույքին կամ չեն գտնվում կողպված փակ տարածքում, առարկաների պահատուփ/պահախուց (սեյֆեր, բունկերներ, և այլն) հանդիսացող գույքի ջարդում, կամ դրանց բացում ստեղներով, կրկնօրինակված բանալիներով կամ այլ գործիքներով:

Ընդ որում, կոտրանքի կամ վնասման միջոցով գողությունը համարվում է տեղի ունեցած միայն այն դեպքում, եթե տվյալ փաստը հաստատված է քրեական վարույթ իրականացնող իրավասու մարմինների կողմից:

4.1.15. Կողոպուտի կամ ավազակության: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն առաջացել է երրորդ անձանց այնպիսի անօրինական գործողությունների արդյունքում, որոնք ՀՀ քրեական օրենսգրքով որակվում են որպես «կողոպուտ» կամ «ավազակություն» (ներառյալ դրանց կատարման փորձը): Կողոպուտը կամ Ավազակությունը համարվում է տեղի ունեցած միայն այն դեպքում, եթե տվյալ իրադարձության փաստը հաստատված է քրեական վարույթ իրականացնող իրավասու մարմինների կողմից:

4.1.16. Տեղափոխման ժամանակ կողոպուտի կամ ավազակության: Հայաստանի Հանրապետության տարածքով տեղափոխվող գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում):

4.1.17. Ապահովագրված գույքի վնասման ուղղված երրորդ անձանց կանխամտածված գործողությունների: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է՝

4.1.17.1. գույքի չարամիտ դիտավորությամբ ոչնչացման կամ վնասման, այդ թվում՝ այրելու, պայթեցնելու կամ այլ հանրավտանգ ճանապարհներով, կամ էլ նշվածների իրագործման փորձերի,

4.1.17.2. վանդալիզմի,

4.1.17.3. խուլիգանության, խռովությունների, գործադուլների,

4.1.17.4. զանգվածային անկարգության:

4.1.18. Տրանսպորտային միջոցի վթարի: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք ճանապարհատրանսպորտային պատահարի:

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

4.1.19. Ծխի ազդեցության: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը տեղի է ունեցել ապահովագրության տարածքի սահմաններում տեղակայված տաքացնող, ջեռուցող, չորացնող սարքավորումից ծխի անսպասելի և ոչ սովորական արտահոսքի հետևանքով:

4.1.20. Ձայնային հարվածի: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է ձայնային արգելքը հատող թռչող սարքի կողմից առաջացրած ձայնային հարվածի:

4.1.21. Մեխանիկական վնասների: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն հետևանք է՝

4.1.21.1. օբյեկտների կամ դրանց մասերի (ներառյալ ավտոմեքենաների անիվների տակից թռչող քարերի և այլ պինդ առարկաների), բեռների կամ այլ առարկաների վայր ընկման, բախման կամ անկման, ինչպես նաև այդ առարկաների անկման ժամանակ առաջացած օդային ալիքների հարվածի հետևանքով,

4.1.21.2. սյուների, ծառերի, լուսամփոփների, լուսացույցների, շինարարական կոունկների և այլ շինարարական մեխանիզմների, շինությունների մասերի և այլ նմանատիպ առարկաների անկման կամ բախման հետևանքով

4.1.21.3. աստրոնոմիական օբյեկտների անկման (մետեորիտներ, աստերոիդներ, քարեր, և այլն), օդաչուով կամ անօդաչու թռչող սարքերի (այդ թվում ինքնաթիռներ, տիեզերանավեր) կամ դրանց մասերի, կան այդ սարքերում գտնվող բեռների կամ այդ օբյեկտների վրայից այլ առարկաների անկման, ինչպես նաև այդ առարկաների անկման ժամանակ առաջացած օդային ալիքների հարվածի հետևանքով,

4.1.21.4. Ապահովադրին (Շահառուին) պատկանող տարածքներից դուրս, այդ թվում՝ Ապահովադրին (Շահառուին) չպատկանող հարևան շինություններում երրորդ անձանց կողմից կատարվող վերանորոգման շինարարական աշխատանքների կամ վերակառուցման (վերապլանավորումներ, վերասարքավորումներ) անցկացման, բազմաբնակարան շենքերի կամ կառույցների վրա, երրորդ անձանց կողմից շինարարական աշխատանքների կատարման հետևանքով:

4.1.22. Ահաբեկչության: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է երրորդ անձանց կողմից կատարված այնպիսի գործողությունների, որոնք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ իրավական ակտերով որակվում են որպես «Ահաբեկչություն» կամ «Ահաբեկչական գործողություն»:

4.1.23. Կարճ միացման: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում) այնպիսի կրակի ծագման հետևանքով (բաց կրակ), որը կարող է ինքնուրույնաբար տարածվել դրա ծագման և տարածման համար հատուկ չնախատեսված վայրերում, ինչպես նաև կարող է ունենալ գույքի վրա ազդեցություն այդ կրակի, վառվող ապրանքների ծխի, մոխրի և այլնի, բարձր ջերմաստիճանի միջոցով, եթե վնասվածքը կամ կորուստը տեղի են ունեցել էլեկտրամատակարարման գծում հոսանքի լարման տատանման, էլեկտրականության անջատման կամ կարճ միացման արդյունքում:

4.1.24. Կենդանիների գործողությունների: Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում) այնպիսի կենդանիների գործողությունների հետևանքով, ինչպիսիք են կաթնասունները, սողունները, երկկենցաղները, թռչունները, որոնք չեն պատկանում Ապահովադրին (Շահառուին), նրա ընտանիքի անդամներին, նրա հետ համատեղ բնակվող և տնտեսություն վարող անձանց, Ապահովադրի աշխատակիցներին կամ նրանց վստահված անձանց (այդ թվում վարձակալներ):

4.1.25. Կանոնների 4.1.25 կետով թվարկված կենդանիների խմբերից (որոնք հայտնվել են տարածքում բացառապես բնական ճանապարհով) բացի կենդանիների այլ խմբերի,

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

օրինակ՝ կրծողների, միջատների կողմից գույքին հասցված վնասը չի համարվում ապահովագրական պատահար:

4.1.26. **Տեխնածին վթարի:** Գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում) դրա վրա արդյունաբերական կամ գյուղատնտեսական կազմակերպությունների ջրերի և/կամ թափոնների ազդեցության, վտանգավոր նյութերի արտանետման, ջրամբարից ջրի բացթողման և այլ իրադարձությունների հետևանքով, որոնք առաջացել են ապահովագրված տարածքից դուրս վտանգավոր օբյեկտներում վթարների արդյունքում (այդ թվում վերամշակման, ջրառների, և այլ):

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐ

5.1. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ Ապահովագրական պատահարներ չեն համարվում և հատուցման ենթակա չեն՝

5.1.1. նախքան ապահովագրության Պայմանագրի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության հետևանքով պատճառված վնասները,

5.1.2. այն վնասները, որոնք թեև առաջացել են Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո, սակայն հանդիսանում են մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետևանք,

5.1.3. պատերազմի, ռազմական գործողությունների, (անկախ այն բանից, պատերազմ հայտարարված է, թե ոչ), քաղաքացիական պատերազմի, ապստամբության, ահաբեկչության, հեղափոխության կամ խռովության հետևանքով պատճառված վնասները,

5.1.4. գույքի բռնագրավման կամ ազգայնացման, ռեկվիզիցիայի, քանդման կամ կործանման հետևանքով պատճառված վնասները, եթե դրանք տեղի են ունեցել պետական կառավարման մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների հանձնարարությամբ,

5.1.5. շինարարական թերությունների, գույքի օբյեկտների և դրանց մասերի թերի լինելու, շինարարության ժամանակ օգտագործված ոչ պատշաճ որակի նյութերի, նախագծման և շինարարության թերությունների, անորակ կատարված մոնտաժային աշխատանքների հետևանքով պատճառված վնասները,

5.1.6. ապրանքային արժեքի կորուստը/շուկայական արժեքի նվազեցումը,

5.1.7. բարոյական վնասը,

5.1.8. Ապահովադրի (Շահառուի), նրա ընտանիքի անդամների, նրա հետ համատեղ բնակվող կամ տնտեսություն վարող անձանց, Ապահովադրի (Շահառուի) աշխատակիցների կամ նրանց վստահված անձանց (այդ թվում վարձակալի) դիտավորության և/կամ անզգուշության, անփութության հետևանքով պատճառված վնասները,

5.1.9. կրծողների, միջատների կողմից գույքին հասցված վնասները,

5.1.10. միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ազդեցության հետևանքով պատճառված վնասները,

5.1.11. ինքնաայրման, խմորման, փտման, քայքայման, կոռոզիայի, սնկերի կամ այլ բնական երևույթների հետևանքով պատճառված վնասները,

5.1.12. ապահովագրության օբյեկտների ֆիզիկական մաշվածության (կառուցվածքների, սարքավորումների, նյութերի), դրանց շահագործման նորմատիվ ժամկետների խախտման հետևանքով պատճառված վնասները,

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

5.1.13. ապահովագրված գույքին կրակի կամ բարձր ջերմաստիճանի հասցրած վնասը, որն առաջացել է մշակման կամ վերամշակման կամ այլ (չորացման, եփման, արդուկման, ծխեցման, շոգեցման, տաքացման, տաք մշակման կամ մետաղների ծուլման և այլն) նպատակով նրա վրա կրակի կամ տաքության ազդեցությամբ, այդ թվում՝ այն գույքին պատճառված վնասը, որի միջոցով կամ որի մեջ ստեղծվում են կրակը կամ տաքությունը կամ որը հատուկ նախատեսված է դրա ծագման, պահպանման, տարածման կամ փոխանցման (վառարան, օդանցք, ջերմափոխարկիչների, DENOX սարքավորումների) համար,

5.1.14. ապահովագրված գույքին հասցված վնասը, որն առաջացել է բուխարուց, վառարանից կամ այլ վայրից դուրս ընկած կամ վառվող ածուխների խանձման կամ այրման հետևանքով, ծխախոտից կամ ծխամորճից, զոդման լամպից, նման առարկաներից, հատուկ նախատեսված տարածքներից կրակի հանկարծակի դուրս գալու հետևանքով և եթե սույն ենթակետով նախատեսված վնասը հրդեհի հետևանք չէ,

5.1.15. էլեկտրական հոսանքի կարճ միացման, էլեկտրական հոսանքի անցկացման հետ կապված սարքավորումների և էլեկտրական լարերի վթարների ու այլ անսարքությունների հետևանքով առաջացած վնասները,

5.1.16. շենքերի, շինությունների բաց պատուհանների կամ այլ անցքերի միջոցով անձրևի, կարկուտի, ձյան կամ այլ տեղումների ներթափանցման հետևանքով առաջացած վնասները,

5.1.17. տեղափոխման ժամանակ գողության, կողոպուտի կամ ավազակության հետևանքով առաջացած վնասները, եթե դրանք հասցվել են այն անձի կանխատեսված գործողության հետևանքով, ում հանձնարարված էր (ամբողջությամբ կամ մասամբ) գույքի տեղափոխումը կամ պահպանությունը,

5.1.18. պայթուցիկ նյութերի, պայթյունավտանգ սարքավորումների պահպանման, պատրաստման և օգտագործման, ինչպես նաև քիմիական և ֆիզիկական փորձերի անցկացման հետևանքով պատճառված վնասները:

5.2. Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցման վճարումը հետևյալ դեպքերում՝

5.2.1. եթե Պայմանագիրը կնքելիս կամ գործողության ընթացքում Ապահովագրի կողմից Ապահովագրողին հայտնվել են կեղծ տեղեկություններ,

5.2.2. եթե Ապահովագիրը (Շահառուն) չի կատարել սույն Պայմաններով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ներկայացման իր պարտականությունները, որի հետևանքով Ապահովագրողը զրկվել է ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը, պատճառները, հանգամանքները և/կամ վնասների չափը, ապահովագրական պատահարի պատճառը պարզելու հնարավորությունից,

5.2.3. եթե Ապահովագիրը խոչընդոտել է փորձագետների և համապատասխան լիազորված պետական մարմինների աշխատանքներին, ինչը բերել է ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և/կամ վնասի չափը հաստատելու անհնարինությանը,

5.2.4. եթե Ապահովագիրը կեղծել է վնասի ծագման հանգամանքների կամ նրա չափերի վերաբերյալ փաստաթղթերը,

5.2.5. եթե Ապահովագիրը հրաժարվել է վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովագրի (Շահառուի) մեղքով,

5.2.6. առկա են օրենքով և Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցման վճարումը մերժելու այլ հիմքեր:

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

5.3. Եթե պատահարն առաջացել է հաջորդական դեպքերի արդյունքում, և դրա սկզբնական և գլխավոր պատճառ հանդիսացող դեպքն ապահովագրված չէ Պայմանագրով, ապա տվյալ իրադարձությունը ապահովագրական պատահար չի համարվում՝ անկախ հաջորդական դեպքերը կամ դրանցից որևէ մեկն ապահովագրված լինելու հանգամանքից:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

6.1. Ապահովագրական արժեք է համարվում ապահովագրության պայմանագրի կնքման պահին տվյալ գույքի իրական (շուկայական) արժեքը: Ապահովագրական արժեքի որոշման համար Ապահովագրության պայմանագրում Ապահովագրողը կարող է հիմք ընդունվել հետևյալ արժեքներից որևէ մեկը՝

6.1.1. Ապահովադրի հայտարարած արժեքը,

6.1.2. գնահատող կազմակերպությունների կողմից գնահատված արժեքը,

6.1.3. հաշվեկշռային մնացորդային արժեքը

6.1.4. այլ փաստաթղթերով հաստատված արժեքը:

6.2. Կողմերի համաձայնությամբ ապահովագրական գումարը սահմանվում է ՀՀ դրամով, իսկ ոչ ռեզիդենտների համար կարող է սահմանվել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ Պայմանագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար հրապարակված փոխարժեքով:

6.3. Ապահովադիրն իրավունք ունի վերականգնելու ապահովագրական հատուցումից հետո նվազած ապահովագրական գումարը՝ Կանոնների համաձայն Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին մնացած ժամկետի համար՝ կնքելով լրացուցիչ համաձայնագիր և վճարելով համապատասխան ժամանակահատվածին համամասնորեն հաշվարկված լրացուցիչ ապահովագրավճար:

6.4. Եթե Պայմանագրով ապահովագրական գումարը գերազանցում է գույքի ապահովագրական արժեքը, ապա Պայմանագիրն առոչինչ է ապահովագրական արժեքը գերազանցող գումարի մասով:

6.5. Եթե Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը փոքր է գույքի ապահովագրական արժեքից ապա դա համարվում է ոչ լրիվ գույքային ապահովագրություն: Այդ դեպքում Ապահովագրողն Ապահովադիրին հատուցում է վերջինիս կրած վնասների մի մասը՝ ապահովագրական գումարի՝ ապահովագրական արժեքի նկատմամբ համամասնորեն, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

6.6. Եթե գույքն ապահովագրվել է ոչ լրիվ արժեքով, Ապահովադիրը (Շահառուն) իրավունք ունի իրականացնելու լրացուցիչ ապահովագրություն մեկ այլ ապահովագրական ընկերության մոտ, սակայն բոլոր ապահովագրության պայմանագրերով ապահովագրական գումարները չպետք է գերազանցեն տվյալ գույքի ապահովագրական արժեքը:

6.7. Եթե Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրված գույքի իրական արժեքը նվազում է, ապա Ապահովադիրն իրավունք ունի համապատասխան չափով նվազեցնել ապահովագրական գումարը և ապահովագրավճարը՝ մասհանելով Ապահովագրողի կրած ծախսերը, այն օրվանից, երբ Ապահովադիրը տեղեկացրել է Ապահովագրողին ապահովագրական գումարը նվազեցնելու անհրաժեշտության մասին:

6.8. Ի լրումն ապահովագրական գումարների՝ Պայմանագրում կարող են սահմանվել Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական հատուցման առավելագույն գումարներ (հատուցման չափաքանակներ) ապահովագրված գույքի, ապահովագրական ռիսկերի առանձին խմբերի, ապահովագրված ծախսերի, մեկ ապահովագրական

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

պատահարի կամ Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարների հանրագումարի համար:

**ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ
ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ**

7.1. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:

7.2. Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի ողջ ժամկետի համար Ապահովագրական սակագնի հիման վրա, որը ձևավորվում է Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, Չհատուցվող գումարի տեսակից ու մեծությունից, Պայմանագրի գործողության ժամկետից և ապահովագրական ռիսկի վրա ազդող այլ գործոններից:

7.3. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից Պայմանագրի համաձայն կարող է վճարվել միանվագ (միանգամյա մուծումով) ապահովագրության ողջ ժամկետի համար կամ մաս-մաս՝ համաձայն Պայմանագրով սահմանված ժամանակացույցի:

7.4. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել անկանխիկ՝ Ապահովագրողի համապատասխան հաշվարկային հաշվին:

7.5. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

7.6. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն ապահովագրավճարի վճարման համար կարող է սահմանել լրացուցիչ ժամկետ՝ այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր կամ բանավոր ծանուցելով Ապահովադրին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ծանուցման մեջ պետք է նշվեն լրացուցիչ ժամկետի ընթացքում ապահովագրավճարի չվճարման իրավական հետևանքները:

7.7. Եթե լրացուցիչ ժամկետի ընթացքում Ապահովադիրը չի վճարում ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց Ապահովադրին այդ մասին ծանուցելու: Այս դեպքում Ապահովադրի կողմից նախապես Պայմանագրի համար վճարված Ապահովագրավճարը չի վերադարձվում:

7.8. Եթե ապահովագրական պատահարն առաջացել է լրացուցիչ ժամկետի ավարտից հետո, և Ապահովադիրը չի վճարել ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցել կետանցված Ապահովագրավճարի չափը կամ ընդհանրապես հրաժարվել վճարել ապահովագրական հատուցումը բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովադիրն ապացուցում է, որ ապահովագրավճարը չի վճարվել իրենից անկախ հանգամանքներում:

7.9. Եթե մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի հաջորդ օրը միանվագ կամ հերթական (սկսած երկրորդից) ապահովագրավճարը չի վճարվել կամ վճարվել է Պայմանագրով նախատեսվածից քիչ, ապա Պայմանագրով նախատեսված ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված օրվա 23.59 ժամից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 23.59 ժամը:

7.10. Ապահովագրողը, հաշվի առնելով իրեն հայտնի դարձած ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդող հանգամանքների առկայությունը, կարող է Ապահովադրից

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

(Շահառուից) պահանջել Պայմանագրի պայմանների փոփոխություն կամ ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճար:

7.11. Եթե Ապահովադիրը (Շահառուն) դեմ է Պայմանագրի պայմաններում փոփոխություններ մտցնելուն կամ լրացուցիչ ապահովագրավճար մուծելուն, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լուծելու Պայմանագիրը՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

7.12. Ապահովադրի (Շահառուի) կողմից Կանոնների 7.11 կետով նախատեսված պարտավորության չկատարման դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի լուծել Պայմանագիրը և իրավական ակտերով սահմանված կարգով պահանջել Պայմանագրի լուծման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցում:

ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

8.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև սահմանված ձևով ձեռք բերված համաձայնություն է, ըստ որի՝ Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և Կանոններով սահմանված դեպքերում և կարգով Ապահովադիրին (Շահառուին) տրամադրել ապահովագրական հատուցում:

8.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի բանավոր կամ գրավոր դիմումի, ներառյալ՝ համապատասխան էլեկտրոնային միջավայրում կատարված հարցման հիման վրա: Ընդ որում, Պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել ինչպես Կողմերի ստորագրությամբ (ներառյալ՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ) մեկ փաստաթուղթ կազմելու, այնպես էլ հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

8.2.1. փոստային, հեռագրային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից: Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ անձի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը,

8.2.2. Ընկերության կողմից համապատասխան տեխնիկական հնարավորություններ ներդրված լինելու դեպքում՝ ինտերնետային կայքի, վճարային համակարգերի, տերմինալների միջոցով և բջջային հավելվածներով: Սույն կետով նշված եղանակով պայմանագիր կնքվելու դեպքում Ապահովադիրն նույնականացնող տվյալները համապատասխան էլեկտրոնային համակարգում մուտքագրվելու և դրան ի պատասխան՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին Վկայագրի՝ էլեկտրոնային տարբերակի ստացման ուժով համարվում է, որ տվյալ Պայմանագիրը կնքվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով, որը հնարավորություն է տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից, և որի դեպքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված Վկայագիրն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ Կողմերի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը,

8.2.3. օրենքով չարգելված այլ եղանակներով:

8.3. Պայմանագրի կնքման համար Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել՝

8.3.1. գույքի նկատմամբ սեփականության (տնօրինման, տիրապետման, օգտագործման) իրավունքը հաստատող փաստաթղթերը կամ դրանցում պարունակվող տվյալները,

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

8.3.2. Ապահովադրի անձնագրային տվյալներ

8.3.3. անկախ փորձագետի կողմից տրամադրված գույքի արժեքի գնահատման եզրակացություն և/կամ արժեքը հաստատող փաստաթղթեր,

8.4. Ապահովագրված գույքը ժառանգության իրավունքով այլ անձի սեփականությունը դառնալու դեպքում Պայմանագրի գործողությունը շարունակվում է մինչև նշված ժամկետի ավարտն ի օգուտ ժառանգների, որտեղ որպես Ապահովադիր հանդես են գալիս Ապահովադրի գույքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժառանգություն (սեփականության) ընդունած Ապահովադրի ժառանգները՝ Ապահովագրության պայմանագրում առանց փոփոխություն կատարելու:

8.5. Ապահովադրի մահվան դեպքում նրա իրավունքները և պարտականությունները փոխանցվում են երրորդ անձին (Շահառուին), եթե վերջինիս օգտին է կնքվել Պայմանագիրը, իսկ եթե Ապահովագրության պայմանագրում Շահառու նախատեսված չէ, ապա Ապահովադրի իրավունքներն ու պարտականությունները անցնում են վերջինիս գույքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժառանգություն (սեփականության) ընդունած ժառանգներին:

8.6. Պայմանագիրը կարող է կնքվել Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ ցանկացած ժամկետով:

8.7. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն սույն գլխով նախատեսված կարգով կնքելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

8.8. Պայմանագրի կորստի դեպքում Ապահովագրողն Ապահովադրի դիմումի համաձայն տալիս է կրկնօրինակ, որից հետո կորցրած օրինակը համարվում է անվավեր: Ապահովագրողը կարող է Ապահովադրից գանձել Պայմանագրի կրկնօրինակի պատրաստման և ձևակերպման համար կատարված ծախսերի գումարը:

ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄ

9.1. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

9.1.1. Պայմանագրի կողմերի համաձայնությամբ,

9.1.2. Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո,

9.1.3. Ապահովագրողի կողմից Կանոնների և դրանց հիման վրա կնքված Պայմանագրի համաձայն իր պարտավորությունների լրիվ ծավալով կատարելուց հետո,

9.1.4. օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի լուծարման դեպքում, եթե տվյալ ապահովագրական ռիսկը, ապահովադրի համաձայնությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով չի փոխանցվում այլ ապահովագրական ընկերության,

9.1.5. օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

9.2. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Ապահովագրողին չի ազատում Պայմանագրի գործողության ժամանակահատվածում տեղի ունեցած ապահովագրական պատահարների գծով ապահովագրական հատուցումների պարտավորությունից:

9.3. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս, քան տասնհինգ օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

9.4. Ապահովադրի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադիրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության Կանոնների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

9.5. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար՝ հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

9.6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար բացառությամբ այն դեպքերի երբ ապահովագրական հատուցումը մերժվել է:

**ԲԱԺԻՆ 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

10.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

10.1.1. ստանալ տեղեկատվություն Ապահովագրողի մասին՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ծավալով, պայմաններով և կարգով,

10.1.2. Ապահովագրողից ստանալ խորհրդատվություն Կանոնների և Պայմանագրի կետերի վերաբերյալ,

10.1.3. ստանալ Կանոնները, որոնց հիման վրա կնքվում է Պայմանագիրը,

10.1.4. պահանջել Ապահովագրողից վճարել Շահառուին ապահովագրական հատուցում պատահարն ապահովագրական ճանաչվելու դեպքում՝ Պայմանագրի պայմաններով սահմանված ծավալով և կարգով,

10.1.5. սույն Կանոնների և ՀՀ օրենսդրության համաձայն վաղաժամկետ լուծել Պայմանագիրը,

10.1.6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխարինել Պայմանագրում նշված Շահառուին մեկ այլ անձով՝ գրավոր տեղեկացնելով այդ մասին Ապահովագրողին: Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով, եթե Ապահովագրողին պահանջ է ներկայացրել ապահովագրական հատուցում ստանալու համար, կամ երբ Շահառուն արդեն կատարել է Պայմանագրի գծով իր պարտականություններից որևէ մեկը,

10.1.7. Պայմանագիրը կորցնելու դեպքում՝ դիմումի հիման վրա ստանալ կրկնօրինակը:

10.2. Ապահովադիրը պարտավոր է՝

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

10.2.1. Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրվող գույքի՝ այլ ապահովագրական ընկերությունների հետ ունեցած գործող ապահովագրության պայմանագրերի մասին,

10.2.2. վճարել ապահովագրավճարը ապահովագրական Պայմանագրով սահմանված ժամկետում և չափով,

10.2.3. անընդհատ հոգ տանել ապահովագրված գույքի մասին այնպես, կարծես այն ապահովագրված չէ ընդհանրապես, ձեռնարկել բոլոր խելամիտ և նպատակահարմար քայլերը դրա պահպանման և փրկման ուղղությամբ և պահել իրեն այնպես, կարծես այդ գույքի նկատմամբ ապահովագրական պաշտպանվածություն չի գործել ընդհանրապես,

10.2.4. հետևել ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվ իրավական ակտերով սահմանված վերանորոգման-շինարարական աշխատանքների կատարման, ջրատար, կոյուղու, ջեռուցման, սառեցման համակարգերի և օդափոխանակության համակարգի օգտագործման, տարածքների և շարժական գույքի պահպանման, հակահրդեհային անվտանգության նորմերը և կանոնները, տեխնիկական օգտագործման կանոնները, սանիտարահիգիենիկ պահանջները և այլն, այդ թվում ապահովագրության օբյեկտի անվտանգությունը և պիտանելիությունը ապահովող միջոցառումները, ապահովել ապահովագրվող տարածք ազատ մուտքի արգելքը,

10.2.5. վերացնել ապահովագրական ռիսկի էական մեծացման վրա ազդող հանգամանքները, որոնց վերացման համար Ապահովագրողից ստացել է գրավոր ցուցում,

10.2.6. անմիջապես, հենց որ դա իրեն հայտնի դառնա, գրավոր ծանուցել Ապահովագրողին էական հանգամանքների փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա: Ռիսկի աստիճանի մեծացման վրա ազդող էական հանգամանքներ, ամեն դեպքում, ճանաչվում են ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին հայտնած տեղեկություններում փոփոխությունները, ինչպես նաև ցանկացած դեպքում ապահովագրված շինությունում ձևափոխություն (վերակառուցում, վերազինում), ապահովագրված շինության բանալիների կորուստ, անսարքությունների հայտնաբերում կամ պահակային կամ հակահրդեհային համակարգերի անջատում (այդ թվում՝ սպասարկման պատճառով),

10.2.7. Ապահովագրողի պահանջով նրան փոխանցել ապահովագրված գույքի կամ դրա մի մասի իրավունքները, որոնց համար Ապահովագրողը ապահովագրական գումարի չափով իրականացրել է ապահովագրական հատուցում, կամ Ապահովագրողի ցուցումով իրականացնել այլ գործողություններ վնասի նվազեցման նպատակով, այդ թվում ձևակերպել լիազորագրեր այդպիսի գույքի իրացման և իրացման արդյունքում գոյացած միջոցները Ապահովագրողի հաշվին վճարման համար,

10.2.8. Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը (կամ դրա համապատասխան մասը), եթե բացահայտվել են հանգամանքներ, որոնք օրենքով կամ սույն ապահովագրության Կանոններով ամբողջությամբ կամ մասնակի զրկում են Ապահովագրողին (Շահառուին) ապահովագրական հատուցման ստացման իրավունքից:

10.3. Ապահովագրողն իրավունք ունի՝

10.3.1. ստուգել Ապահովագրողի կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև հետևել և պահանջել Ապահովագրողի կողմից Պայմանագրի պահանջների կատարումը,

10.3.2. Պայմանագիր կնքելուց առաջ պահանջել համապատասխան փաստաթղթեր,

10.3.3. հարցում կատարել համապատասխան իրավասու մարմիններին տեղի ունեցած պատահարի փաստը և պատճառները հաստատող փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ ստանալու նպատակով,

10.3.4. ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու համար կասեցնել կամ երկարաձգել ապահովագրական հատուցման գործընթացը, եթե ի հայտ են

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

եկել այնպիսի հանգամանքներ, որի պատճառով Ապահովագրողն անհրաժեշտ է համարում ստանալ հավելյալ տեղեկություն Ապահովագրական պատահարի վերաբերյալ,

10.3.5. ապահովագրական հատուցման ենթակա գումարը վճարելիս այն հաշվանցել Պայմանագրի գծով կետանցված Ապահովագրավճարի գումարի հետ,

10.3.6. պահանջել Պայմանագրով սահմանված Ապահովագրավճարի չափի փոփոխություն, Պայմանագրի դադարեցում կամ Պայմանագրի դրույթների փոփոխություն, եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի աստիճանի մեծացում,

10.3.7. Ապահովադրից պահանջել տրամադրել լրացուցիչ տեղեկություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կարող են որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և համապատասխանաբար դրա հետևանքով հնարավոր վնասների չափերի կանխորոշման վրա,

10.3.8. միակողմանի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը Ապահովադրի կողմից՝ օրենսդրությամբ կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում,

10.3.9. պահանջել վճարված հատուցման վերադարձ, եթե ապահովագրական հատուցման վճարումից հետո ի հայտ են գալիս ապահովագրական հատուցման վճարումը մերժելու Կանոններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմք,

10.3.10. իրականացնել Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

10.4. Ապահովագրողը պարտավոր է՝

10.4.1. Ապահովադրին ծանոթացնել Կանոններին և տրամադրել օրինակը,

10.4.2. Ապահովադրի պահանջով օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով փոփոխություններ կատարել Պայմանագրում, եթե դրա գործունեության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն,

10.4.3. Կանոններով սահմանված ժամկետներում և կարգով կայացնել ապահովագրական հատուցման վճարման կամ մերժման մասին որոշում,

10.5. Ապահովադիրը, Ապահովագրողը, և Շահառուն պարտավոր են չհրապարակել, չբացահայտել և (կամ) երրորդ անձին չտրամադրել իրենց հայտնի դարձած ապահովագրական գաղտնիք հանդիսացող և (կամ) պարունակող ցանկացած տեսակի տեղեկություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել սեփական և (կամ) երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:

10.6. Ապահովադիրն ու Ապահովագրողն ունեն օրենքով, Կանոններով և Պայմանագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

**ԲԱԺԻՆ 11. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՂՈՐԴԱՑՈՒԹՅԱՆ/ԾԱՆՈՒՑՄԱՆ
ԵՂԱՆԱԿՆԵՐ**

11.1. Ապահովագրողն իրավասու է ՀՀ գործող օրենսդրությամբ, Պայմանագրով և Կանոններով նախատեսված բոլոր ծանուցումները (որոշումներ, փաստաթղթերը և այլ նյութեր) Կանոններով և Պայմանագրով նախատեսված անձանց հանձնել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

11.1.1. առձեռն՝ ստացման մասին ստորագրությամբ,

11.1.2. Ապահովագրողի, Ապահովադրի (Շահառուի)՝ Պայմանագրում նշված հասցեով պատվիրված նամակով ուղարկելու միջոցով,

11.1.3. իր էլեկտրոնային փոստի հասցեից Ապահովադրի՝ Պայմանագրում նշված կամ Ապահովագրողին գրավոր ձևով տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով,

11.1.4. տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում մուտքագրելու միջոցով՝ անձի համաձայնության առկայության դեպքում:

11.2. Ապահովադիրը (Շահառուն) Կանոններով և Պայմանագրով ներկայացման ենթակա դիմումները (այդ թվում՝ հայտային դիմում), ծանուցումները, փաստաթղթերը և այլ նյութերը Ապահովագրողին կարող են ներկայացվել հետևյալ եղանակներով՝

11.2.1. այն դեպքում, երբ նախատեսված է փաստաթղթի բնօրինակի կամ դրա նոտարական կարգով հաստատված պատճենի ներկայացում, այն ներկայացվում է առձեռն՝ Ապահովագրողի գրասենյակում, կամ ուղարկվում է Ապահովագրողի պաշտոնական փոստային հասցեին,

11.2.2. այն դեպքում, երբ նախատեսված է փաստաթղթի պատճենի (լուսապատճենի) ներկայացում, այն ներկայացվում է առձեռն՝ Ապահովագրողի գրասենյակում, կամ Ապահովագրողի համաձայնությամբ, ուղարկվում է Ապահովագրողի էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային հավելվածով (Viber, WhatsApp, այլ) Ապահովագրողի հեռախոսահամարին կամ մուտքագրվում է տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում:

11.3. Սույն գլխում նշված որևէ եղանակով կատարված բոլոր ծանուցումները, ներկայացված դիմումները, փաստաթղթերը և այլ նյութերը համարվում են պատշաճ ուղարկված և/կամ ստացված Ապահովագրողի, Ապահովադրի (Շահառուի) կողմից, և վերջինների կողմից որոշակի գործողություններ կատարելու համար սահմանված ժամկետները ծանուցող անձի կողմից սկսվում են հաշվարկվել:

11.3.1. ստորագրությամբ առձեռն հանձնվելու դեպքում՝ հանձնելու օրվան հաջորդող օրվանից,

11.3.2. պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ նամակի ստացման կամ որևէ հիմքով նամակը փոստի ծառայության կողմից հետ վերադարձման պահին հաջորդող օրվանից,

11.3.3. էլեկտրոնային փոստի հասցեով կամ բջջային հավելվածով (Viber, WhatsApp, այլ) ուղարկվելու դեպքում՝ ուղարկելու օրվան հաջորդող օրվանից

11.3.4. տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում մուտքագրելու դեպքում՝ մուտքագրման օրվան հաջորդող օրվանից:

**ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ԵՎ
ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻՑ ՀԵՏՈ**

12.1. Ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո Ապահովադիրը (Շահառուն), այն պահից սկսած, երբ իրեն հայտնի է դարձել Պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին, պարտավոր է՝

12.1.1. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները վնասները կանխելու կամ նվազեցնելու նպատակով,

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

12.1.2. անհապաղ՝ առաջին իսկ հնարավորության դեպքում, պատահարի մասին հայտնել օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմիններին, որոնք իրավասու են անցկացնել պատահար տեղի ունենալու հանգամանքների ուսումնասիրություն և հետաքննություն, մասնավորապես՝

12.1.2.1. հրդեհի դեպքում անհապաղ դիմել հակահրդեհային ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանմանը,

12.1.2.2. գողության, հափշտակության կամ այդպիսի փորձի դեպքում, ինչպես նաև երրորդ անձանց անօրինական գործողությունների հետևանքով ապահովագրված գույքին պատճառված վնասի դեպքում, անհապաղ դիմել ՀՀ Ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանմանը,

12.1.2.3. բնական աղետների հետևանքով վնասի կամ կորստի դեպքում անհապաղ դիմել օրենսդրությամբ սահմանված իրավասու պետական մարմիններին, որոնք իրականացնում են շրջակա միջավայրի իրավիճակի հսկողությունն ու վերահսկողությունը և ստանալ համապատասխան փաստաթղթեր, որոնք կհավաստեն տվյալ տարածաշրջանում բնական աղետ տեղի ունենալու փաստը,

12.1.3. անհապաղ՝ առաջին իսկ հնարավորության դեպքում այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով վկայագրի վրա նշված հեռախոսահամարով (հեռախոսահամարներից որևէ մեկով) և պատասխանել Ապահովագրողի հեռախոսային հարցադրումներին,

12.1.4. Ապահովագրողին հայտնել հնարավորինս ամբողջական տեղեկատվություն տեղի ունեցած պատահարի մասին, որը հայտնի է իրեն ծանուցելու պահի դրությամբ (ամսաթիվը, ժամը և վայրը, պատահարի առաջացման հանգամանքները և այլն) պատահարի վայրում սպասել Ապահովագրողի ներկայացուցչին (եթե Ապահովագրողն Ապահովադրին տեղեկացրել է, որ իր ներկայացուցիչը ժամանելու է դեպքի վայր) և կատարել նրա ցուցումները,

12.1.5. տվյալ իրադրությունում կիրառել խելամիտ և հասանելի միջոցներ, վնասը նվազեցնելու կամ կանխելու և ապահովագրված գույքը փրկելու համար,

12.1.6. ներկա գտնվել պատահարի գրանցման բոլոր գործընթացներին՝ կատարելով լիազորված պետական իրավասու մարմինների և Ապահովագրողի՝ պատահարի հետ կապված պահանջները և ցուցումները:

12.2. Ապահովագրական հատուցում ստանալու համար ապահովագրական պատահարից հետո եռամսյա ժամկետում Ապահովադիրը (Շահառուն) պետք է Ապահովագրողին ներկայացնի սահմանված ձևով գրավոր դիմում՝ նշելով պահանջվող տվյալները, մասնավորապես՝ պատահարի տեղի ունենալու վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև դիմումին կցի պատահարի հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

12.3. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին ներկայացման ենթակա փաստաթղթերն են՝

12.3.1. գրավոր դիմում,

12.3.2. տուժողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

12.3.3. գույքի նկատմամբ սեփականության (տնօրինման, տիրապետման, օգտագործման) իրավունքը հավաստող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի պատճենները՝ Ապահովագրողին ցույց տալով նաև դրանց բնօրինակները,

12.3.4. գույքին պատճառված վնասի համար պատասխանատու անձի առկայության դեպքում՝ վերջինիս վավերապայմանները՝ անունը, ազգանունը, հաշվառման (բնակության)

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՂԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

հասցեն, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, կազմակերպության դեպքում՝ պետական ռեգիստրի կողմից տրված ընկերության գրանցման տվյալները, հասցեն և հեռախոսահամարը, տեղի ունեցած պատահարին մասնակից տրանսպորտի իրեն հայտնի տվյալները (հաշվառման համարանիշը, ավտոմեքենայի մականիշը, գույնը և այլն),

12.3.5. ոստիկանության, հակահրդեհային ծառայության և այլ իրավասու մարմինների կողմից տրված՝ ապահովագրական պատահարը հավաստող փաստաթղթերը,

12.4. կրած վնասների գումարների չափը հաստատող և հիմնավորող փաստաթղթեր, որոնց հիման վրա կկատարվի ապահովագրական հատուցման գումարի հաշվարկը այդ թվում՝

12.4.1. վնասված, ոչնչացված կամ կորած գույքի ցուցակը,

12.4.2. ապահովագրական պատահարի վրա հասնելու պահին վնասված, ոչնչացված կամ կորած գույքի արժեքը հաստատող փաստաթղթերը,

12.4.3. գույքի գույքագրման ակտերը, որոնք կազմված են գույքի վնասման (ոչնչացման) փաստի վերաբերյալ՝ ապահովագրական պատահարը վրա հասնելու ամսաթվին մոտ ամսաթվով՝ ապրանքային պահուստների (մուտքի և բեռնաթափման) հաշվառման վերաբերյալ, պատրաստի արտադրանքի (հումքի, նյութերի, իրացման ենթակա ապրանքների կամ կիսաֆաբրիկատների) վերաբերյալ փաստաթղթերը,

12.4.4. վերանորոգման (վերականգնողական) աշխատանքների կատարման հաշվեկշիռը,

12.4.5. այլ փաստաթղթեր, որոնց հիման վրա կարելի է գաղափար կազմել Ապահովագրի կրած վնասների մեծության վերաբերյալ:

12.5. գույքի գողության կամ ապահովագրական այն ռիսկի դեպքում, երբ հարուցվել է քրեական վարույթ, Ապահովագրիը պարտավոր է բացի Կանոնների 12.2 և 12.3 կետում նշված փաստաթղթերից ներկայացնել նաև՝

12.5.1. եթե 12.3 կետում նշված փաստաթղթերից որևէ մեկը կցված է գույքի գողության փաստով հարուցված քրեական վարույթի նյութերին, ապա այդ հանգամանքը հաստատող փաստաթուղթը,

12.5.2. քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ արձանագրության պատճենը, իսկ Կանոններով նախատեսված դեպքերում նաև քրեական վարույթի ավարտի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը,

12.5.3. Ապահովագրողի պահանջով՝ նաև այլ փաստաթղթեր, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են վնասի պատճառների և (կամ) չափի հիմնավորման համար:

12.6. Գործի հանգամանքների հետ կապված ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկը Ապահովագրողի կողմից կարող է կրճատվել:

12.7. Ապահովագրիը (Շահառուն, լիազորված անձը) կրում է իր կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի և կամ դրանց պատճենների իսկության, հավաստիության և ոչ կեղծ լինելու հետ կապված բոլոր ռիսկերը:

12.8. Այն դեպքում, երբ Ապահովագրիը (Շահառուն) ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումին կից չի ներկայացնում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա Ապահովագրողը պարտավոր է դիմումի ստացման օրը կամ դրան հաջորդող մեկ օրվա ընթացքում Ապահովագրիին (Շահառուին) տրամադրել վերջինի կողմից ներկայացման ենթակա, բայց դեռևս չներկայացված փաստաթղթերի ցանկը: Սույն կետով նախատեսված պակաս փաստաթղթերը պետք է Ապահովագրողին ներկայացվեն փաստաթղթերի ցանկը ստանալուց հետո՝ եռամսյա ժամկետում:

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

12.9. Դիմումները, պատասխանները կամ փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ տեղեկացումները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում համապատասխան ժամկետները կետանցած անձը զրկվում է դիմումը, փաստաթղթերը կամ պատասխանը ներկայացնելու արդյունքում առաջացող իրավունքից և (կամ) կրում է չտեղեկացման համար սահմանված բացասական հետևանքները, բացառությամբ այն դեպքերի, երբ ժամկետի բացթողումը Կանոններով սահմանված հիմքերով հարգելի է ճանաչվել Ապահովագրողի կողմից:

12.10. Սույն Կանոններով ժամկետի բացթողումը հարգելի է ճանաչվում, եթե ժամկետները բաց թողած անձն ապացուցում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության փաստը՝

12.10.1. Ժամկետի բացթողման պատճառ է հանդիսացել տվյալ անձի անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում գտնվելը, որն անհնարին է դարձրել նրա կողմից սահմանված ժամկետում դիմումի, պատասխանի կամ փաստաթղթերի ներկայացումը կամ տեղեկացման պարտավորության կատարումը՝ ներառյալ ներկայացման ենթակա իրավասու պետական մարմնի ակտն ընդունված և (կամ) ուժի մեջ մտած չլինելու պատճառով,

12.10.2. անձը դիմումը կամ պատասխանը ներկայացրել է կամ տեղեկացման պարտավորությունը կատարել է Կանոնների 12.10.1 ենթակետով նախատեսված հանգամանքները վերանալու մասին իրեն հայտնի դառնալուց հետո՝ համապատասխան գործողության կատարման համար սույն կանոններով սահմանված ժամկետում:

12.11. Փաստաթղթերի ներկայացման ժամկետի բացթողումը Ապահովագրողի կողմից կարող է հարգելի ճանաչվել այն դեպքում, երբ Ապահովադիրը (Շահառուն) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին: Նշված դեպքերում Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է փաստաթղթերի ներկայացման ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով:

**ԲԱԺԻՆ 13. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ**

13.1. Ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի հիման վրա Ապահովադիրին կամ Շահառուին վճարման ենթակա գումարն է, որը վճարվում է ինչպես դրամական արտահայտությամբ՝ ՀՀ դրամով, այնպես էլ Ապահովագրողի և Ապահովադիրի (Շահառուի) փոխադարձ համաձայնությամբ կարող է վճարվել նաև համարժեք գույքով կամ կարող է իրականացվել վնասված գույքի վերանորոգում, բայց ոչ ավել, քան Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի չափը կամ դրան համարժեք գույքը:

13.2. Ապահովագրական հատուցման ժամանակ առաջնահերթությունը տրվում է պարտադիր ապահովագրության տեսակներին:

13.3. Ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը հաստատվելու դեպքում Ապահովագրողն ապահովագրական հատուցումն իրականացնում է՝

13.3.1. **Գույքի ամբողջական կորստի (ոչնչացման) դեպքում** ապահովագրական գումարի չափով, ընդ որում Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադիրից (Շահառուից) ստանալ կորած (ոչնչացած) գույքի կամ դրա մասի նկատմամբ իրավունքները, որի համար ապահովագրական գումարի չափով հատուցում է տրամադրել:

13.3.2. **Գույքի մասնակի վնասի դեպքում** վերականգնողական ծախսերի չափով՝ վերանորոգման ընթացքում փոխարինվող նյութերի, սարքավորումների և պահեստամասերի

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

մաշվածության տոկոսը նվազեցնելով, բայց ոչ ավել, քան ապահովագրական գումարն է: Գույքի մասնակի վնասի դեպքում ապահովագրության Պայմանագրով կարող են սահմանվել լրացուցիչ սահմանաչափեր, այդ թվում ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի կիրառման, մեկ քառակուսի մետրի համար բացարձակ թվով կամ այլ ձևերով:

13.4. Ի լրումն ապահովագրական պատահարի վրա հասնելու հետևանքով ապահովագրված գույքին պատճառված վնասի հատուցմանը՝ Ապահովագրողը փոխհատուցում է նաև խելամիտ և նպատակաուղղված ծախսերը, որոնք կատարել է Ապահովադիրը՝ նպատակ ունենալով կրճատել այն վնասները, որոնք ենթակա են հատուցման Ապահովագրողի կողմից (փրկման ծախսեր), եթե այդպիսի ծախսերը անհրաժեշտ են եղել կամ իրականացվել են Ապահովագրողի կարգադրությամբ:

13.5. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրով, Կանոնների 13.5 կետով նշված մաշվածության տարեկան տոկոսի չափը որոշում է Ապահովագրողը՝ կախված գույքի տեսակից և նրա օգտագործման տեխնիկական վիճակից, բայց ամեն դեպքում չի կարող գերազանցել հետևյալ չափերը՝

13.5.1. կրող կառույցների համար – 5%,

13.5.2. ներքին հարդարանքի և ճարտարագիտական սարքավորումների համար – 10%,

13.5.3. շարժական գույքի համար – 10%:

13.6. Վերականգնողական ծախսերը հաշվարկվում են՝ ելնելով վնասված գույքի վերանորոգման միջին շուկայական գներից՝ վնասի հաշվարկման պահին գույքի գտնվելու տարածաշրջանում: Այն դեպքում, երբ հնարավոր չի հաշվել վնասված կոնկրետ էլեմենտի արժեքը, վերականգնողական ծախսերի հաշվարկը իրականացվում է վնասված էլեմենտի նմանատիպ գույքի արժեքով:

13.7. Վերականգնողական ծախսերը ներառում են՝

13.7.1. վերանորոգման համար նյութերի, պահեստամասերի և սարքավորումների ծախսերը,

13.7.2. վերանորոգման աշխատանքների վարձատրման ծախսերը,

13.7.3. նյութերը վերանորոգման վայր հասցնելու ծախսերը և այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրված գույքի վերականգնման և նախնական տեսքի բերելու համար,

13.7.4. վնասված գույքի վերանորոգման համար դրա հասանելիության ապահովման ծախսերը (ներառյալ պատերի, առաստաղների, հատակի քանդում և այլն),

13.7.5. վնասված գույքը վերանորոգման համար պիտանի տեսքի բերելու համար ծախսերը (վնասված նյութերի և սարքավորումների ապամոնտաժում, շինարարական աղբի հավաքում, այդ թվում՝ ապահովագրական տարածքում վերականգնման աշխատանքների ժամանակ առաջացած աղբի, և այլն)

13.7.6. կողմերի համաձայնությամբ այլ ծախսեր:

13.8. Ապահովագրության Պայմանագրով կարող են նախատեսվել ապահովագրության Պայմանագրով սահմանված ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով լրացուցիչ ծախսերի և ծառայությունների մատուցման ծախսերի հատուցում Ապահովագրողի կողմից:

13.9. Պատահարի առաջացումից հետո Ապահովագրողն իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական դեպքի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջինների եզրակացությունների վրա:

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

13.10. Ապահովագրական պատահարի առաջացումից հետո, եթե հատուցման իրականացման (վնասի գնահատման) համար անհրաժեշտ են լրացուցիչ տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից (Շահառուից) պահանջել փորձաքննության անցկացում, որն անց է կացվում Ապահովագրողի հաշվին:

13.11. Եթե ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասը Ապահովագրողի պատվերով գնահատվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպության կամ անկախ փորձագետի կողմից, ապա դրանց հետ կապված ծախսերը կրում է Ապահովագրողը: Այդ դեպքում ապահովագրական հատուցման չափը Ապահովագրողի կողմից որոշվում է վերջինների կողմից տրամադրված փորձագիտական եզրակացության (որտեղ գնահատվում է վնասի մեծությունը) հիման վրա:

13.12. Ապահովագրողն իրավունք ունի նաև ինքնուրույն կերպով՝ իր համապատասխան ստորաբաժանման կամ աշխատակցի միջոցով, գնահատելու պատահարի հետևանքով պատճառված վնասի չափը և դա հիմք ընդունելու ապահովագրական հատուցման չափի որոշման համար:

13.13. Պատահարի վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը հնարավորության դեպքում կարող է կազմվել Ապահովադրի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ:

13.14. Ապահովադիրն իրավունք ունի չհամաձայնել Ապահովագրողի կողմից կամ Ապահովագրողի կողմից ներգրավված մասնագետների (փորձագետների) կողմից կազմված փորձագիտական եզրակացության հետ և պահանջել այլ անկախ փորձագետի կողմից փորձաքննության անցկացում: Այդ դեպքում անկախ փորձագետի վարձատրության ծախսերը կատարվում են Ապահովադրի կողմից: Ապահովագրողն իր հերթին կարող է համապատասխան հիմնավորմամբ չընդունել Ապահովադրի փորձագետի եզրակացությունը, որի հետ կապված Ապահովադիրն (Շահառուն) իրավունք ունի դատական կարգով բողոքարկել Ապահովագրողի կողմից կազմված պատահարի վերաբերյալ եզրակացությունը:

13.15. Տարածաշրջանների դեպքում Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել, որպեսզի վնասի չափը որոշվի անկախ փորձագետի կողմից: Այս դեպքում փորձաքննության ծախսերն իրականացվում են այդպիսի պահանջ ներկայացնող Կողմի հաշվին:

13.16. Եթե Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը ցածր է գույքի ապահովագրական (իրական կամ շուկայական) արժեքից, ապա ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողն Ապահովադիրին (Շահառուին) վճարում է ապահովագրական հատուցում ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված փաստացի վնասի մի մասի չափով՝ ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարի համամասնությամբ՝ դրանից մասհանելով Պայմանագրով նախատեսված ոչ պայմանական չհատուցվող գումարը, բացառությամբ Պայմանագրով նախատեսված դեպքերի:

13.17. Գրավադրված գույքի ապահովագրության դեպքում Ապահովագրության պայմանագրում նշված գրավառու հանդիսացող Շահառուն իրավունք ունի ստանալու հատուցում՝ վճարման օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորության գումարի սահմաններում: Հատուցման մնացած մասը վճարվում է Ապահովադիրին կամ այլ Շահառուին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

13.18. Այն դեպքում, երբ Պայմանագրով Ապահովադիրն ապահովագրավճարի վճարումները կատարում է փուլային կարգով (տարաժամկետ վճարման եղանակով), ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա գումարից պահվում են Ապահովադրի կողմից չմոծված ապահովագրավճարները, որից հետո Ապահովադիրը համապատասխան չափով ազատվում է ապահովագրավճարի հետագա մուծումներից:

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

13.19. Ապահովագրողն Ապահովադրի (Շահառուի) կողմից ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է պատճառաբանված որոշում՝ ապահովագրական հատուցում իրականացնելու կամ այն մերժելու վերաբերյալ, իսկ որոշում կայացնելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է Ապահովադրին, Շահառուին:

13.20. Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցումը:

13.21. Հատուցման վճարումը կատարվում է գումարի փոխանցումով ստացողի բանկային հաշվին: Բանկային հաշիվը կարող է նշվել ինչպես ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին ներկայացված դիմումի մեջ, այնպես էլ ներկայացվել առանձին դիմումով:

13.22. Ապահովագրողի կողմից հատուցման վճարման մերժման մասին որոշումը ծանուցվում է Ապահովադրին (Ապահովագրողին կամ Շահառուին)՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ մերժման պատճառների հիմնավորմամբ:

13.23. Հատուցման վճարման կամ մերժման որոշման կայացման ժամկետները Ապահովագրողի կողմից կարող են հետաձգվել, եթե ապահովագրական պատահարի հետ կապված փաստերը ճշգրտելու համար իրավական ակտերով սահմանված հիմքերով նշանակված է լրացուցիչ ստուգում/փորձաքննություն, նախաձեռնվել է քրեական վարույթ կամ դատական գործընթաց՝ մինչև նշված գործընթացների ավարտը կամ առկա են Կանոններով հատուցման վճարմանը խոչընդոտող այլ իրավիճակներ:

13.24. Եթե Կանոններով սահմանված ապահովագրական ռիսկի առնչությամբ իրավասու պետական մարմինների կողմից նախաձեռնվել է քրեական վարույթ, ապա Ապահովագրողն ապահովագրական հատուցում վճարելու կամ այն մերժելու մասին Կանոններով և այլ իրավական ակտերով նախատեսված եզրակացությունն Ապահովադրին (Շահառուին) իրավունք ունի տրամադրել միայն քրեական վարույթի ավարտի կամ կասեցման վերաբերյալ Ապահովադրից (Շահառուից) համապատասխան փաստաթղթերն ստանալու օրվանից հետո՝ հնգօրյա ժամկետում: Գողության ռիսկով Ապահովագրողն ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգել ապահովագրական հատուցման վճարման մասին որոշումը Ապահովադրին (Շահառուին) տրամադրելուց հետո մինչև 6 ամիս ժամկետով: Եթե այդ ժամկետի ընթացքում հայտնաբերվում է գողացված գույքը կամ հանցագործություն կատարած անձը, ապա ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել և իրականացվել տվյալ դեպքի առնչությամբ օրինական ուժի մեջ մտած դատավճիռն Ապահովագրողի կողմից ստանալուց հետո եռօրյա ժամկետում:

13.25. Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազեցվում է հատուցված գումարի չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին Ապահովագրողի եզրակացությունը կազմելու ամսաթվից: Ապահովագրական հատուցման գումարը ստանալուց հետո Ապահովադրին իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարի չափը: Նախնական ապահովագրական գումարի չափը չվերականգնելու դեպքում Ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում հաջորդ հատուցման ժամանակ հաշվի է առնվում նվազեցված ապահովագրական գումարը:

13.26. Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո եթե գողացված ապահովագրված գույքը հայտնաբերվել կամ վերադարձվել է Ապահովադրին կամ հայտնի է դարձել նախկինում որպես գողացված հայտարարված ապահովագրված գույքի գտնվելու

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

վայրը, Ապահովադիրը պարտավոր է անմիջապես այդ մասին տեղեկացնել Ապահովագրողին, ինչպես նաև 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում հետ վերադարձնել Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումը:

13.27. Ապահովադիրը (Շահառուն) երրորդ անձից վնասների հատուցում ստանալու դեպքում պարտավոր է անհապաղ Ապահովագրողին հայտնել այդ մասին:

13.28. Եթե Ապահովադիրը (Շահառուն) տվյալ վնասի գծով արդեն իսկ հատուցում է ստացել այլ պայմանագրի հիման վրա կամ վնասը պատճառած անձից և (կամ) վնասի համար պատասխանատու այլ անձից կամ նրանց անունից, ապա Ապահովագրողը մերժում կամ համապատասխան չափով նվազեցնում է ապահովագրական հատուցման վճարումը:

13.29. Եթե ապահովագրական հատուցումը վճարելուց հետո պարզվում է, որ առկա են եղել կամ ի հայտ են եկել ապահովագրական հատուցումը մերժելու կամ համապատասխան չափով նվազեցնելու հիմքեր, ապա Ապահովագրողը վերանայում է հատուցման որոշումը՝ կայացնելով ապահովագրական հատուցումը մերժելու կամ մասնակի մերժելու մասին նոր որոշում, իսկ Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին վերադարձնել իրեն վճարված կամ ավել վճարված հատուցման գումարը:

ԲԱԺԻՆ 14. ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

14.1. Ապահովագրության պայմանագրում կողմերը կարող են սահմանել Ապահովադիրի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար:

14.2. Հհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական: Այն սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային կամ բացարձակ դրամական արտահայտությամբ:

14.3. Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով կամ չհատուցվող գումարը հավասարվում է 0-ի:

14.4. Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով:

ԲԱԺԻՆ 15. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

15.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադիրին պատճառված վնասից բխող նրա կամ Շահառուի պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:

15.2. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

15.3. Եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադիրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:

ԲԱԺԻՆ 16. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

16.1. Կանոններով և Պայմանագրով սահմանված պարտավորությունները մասնակի կամ լրիվ չկատարելու դեպքում Պայմանագրի կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է անհաղթահարելի ուժի, մասնավորապես՝ ջրհեղեղի, պայթյունի, հրդեհի, երկրաշարժի, այլ տարերային աղետների, պատերազմի, ռազմական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ժողովրդական հուզումների, ահաբեկչության, գործադուլների, արտակարգ դրության, տնտեսական շրջափակման, հաղորդակցման միջոցների աշխատանքի դադարեցման, կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելանքների կամ նման այլ իրադարձությունների:

16.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը կամ դրա հետևանքները երկարաձգվում են 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Պայմանագրի մյուս Կողմին:

16.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Կանոններով և Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 17. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

17.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովադիրը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

17.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովադրի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն,

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և(կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ծայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովադրի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ձայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

17.3. Կետ 17.1-ում նշված Ապահովադրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

17.4. Ապահովադրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

17.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովադիրը (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 17.1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովադիրը (Շահառուն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ
ԲԱԺԻՆ 18. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ**

18.1. Կանոնների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տարբերակին:

18.2. Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

18.3. Տարաձայնությունների դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն: